

Բայց երբ մտաւ պաղպաղուն լոյսն արեւուն,
Պառկելու գնաց ամէն ոք իր յարկին մէջ,
Ուր զոյգ ոտքէն կաղ անուանին Հեփեսոս
Իր հանճարեղ մըտքով սենեակ էր շիներ
Ամէն մէկին: Գնաց շանթընկէց Արամազդն
Աւ իր մահիճն, ուր որ առաջ կը նընջէր
Երբ անուշ քունը կու գար. հոն էլ լելով
Քնացաւ, եւ իր քովն ալ Հերան սովեգան:

Թարգմ. Հ. ԱՐՄԱՆ ԴԱՅԻՆԵԱՆ

ԳԻՍԼԱ՝

(ՊԱՏԱՐԱՆԱՅԷ)

ՏԻԿԻՆ Գ. ՎԻԳԻԼԵՐԻՍԷԼԻՒԻ

ՈւՅ մատախուղը լեցվում էր աշնան
խանձուած անտառները եւ ծառերի կա-
տարները կամաց — կամաց ընկղմում այդ
վհատեցուցիչ խոնաւութեան մէջ: Առկա-
խեալ գորշագոյն անյոյս երկինքը հոգի
վրայ՝ հանդարտ ինչ որ ողբացող մտած-
մունքի մէջ՝ թափում էր արցունք: Եւ
մի՞նում էին այդ արցունքից ծուռ ու մուռ
կարճ փողոցները, տունների կտուրները
սկսում էին փայլել խորձիթների ներսից...
Յանկարճ բարձրացած քամին՝ ինչպէս մի
ամենի գազան՝ պոկեց հին փոքրիկ պա-
տուհանի փեղկը: Եւ կախ ընկաւ նա մի
օղակից վհատեալ փոքրիկ պատուհանի
վրայ: Բայց ժամանակաւոր այդ խորձի-
թում և այլոց կալուածատէր՝ պաշտօնա-
թող պորուչիկ (գինուորական աստիճան)
իշխան Վախտանգ Դագլիշվիլին չ'լսեց
ո՛չ փեղկի պոկուիւր, ո՛չ անձրեկի շրնփոցը
եւ, ջղայնաբար քայլելով սենեակում, դէս
ու դէն էր դարձնում ձեռքի մէջ իր ու-
սանող որդուց հէնց նոր ստացած նամակը
եւ զայրացած դառնում է կնոջը.

— Անձրք է քո Լուարսարը, նա չէ՞ր
որ մի բերան պոռում էր. « Կորչի » եւ

1. Գիսլա (վրացերէն) նշանակում է բնական
տուրք ամենտեսակ բեյութից, որ վճարում են
կալուածատիրոջ նրանց հողերի մշակողը:

այլն: Իսկ այժմ. « Թանկագին հայրիկ,
Շուտով ուղարկի՛ր փող, պէտք է դասա-
խօսութիւնների համար վճարեմ, ապա թէ
ոչ՝ կ'արտաքսեն համալսարանից »: Հէնց
առաջինը ինքն էր բոյկոտ սարքողը: Յի-
շում ես, չէին ուզում մեզ վառելիք ան-
գամ տալ, երբ մենք եկանք քաղաքից:
Այդ բոլորը նրա սարքածն էր: Ախր ես
որտեղից փող ճարեմ դրկեմ նրան: Կ'ասես
թէ չգիտէ անպիտանը, որ մեր միակ
ապրուստի աղբիւրը հոգն է, որին տէր
դարձան անգրագէտ զրգոխչների (քարո-
զիչների) շնորհիւ՝ գիւղացիք:

— Իս ի՞նչ անէ նա: Ձէ՛ որ այնտեղ
օտարութեան մէջ է, — լրջօրէն պատաս-
խանեց նրան կինը:

— Անաստասիա, դու հիմա հարցնում
ես ի՞նչ անէ նա, — կրքոտուեց իշխանը:
Ընկնել նէվա գետը: Ահա թէ ինչ անէ
քո դատարկապորտ որդին: Ես կամենում
էի նրան ուղարկել գինուորական դպրոց:
Նրան այնտեղ կը փափկացնէին, բայց դու
լսել անգամ չէիր ուզում: « Իմ որդին
պէտք է ուսանող դառնայ! Նպատակիդ
հասար: Տենենք՝ նրանից ի՞նչ տեսակ
դատաւոր կամ փաստաբան պիտի դուրս
գայ: Իւր հարագատ հօրն էր ծախում
այստեղ, իսկ ժողովուրդը չի՛ ծախի: Ինչ-
պիտի արդարութեան պաշտպան պիտի լի-
նի նա, երբ հէնց էն քո սքանչելի Լուար-
սարը երբեմն անտանելի սուտեր է խօ-
սում:

— Այդ տղայ ժամանակն էր խօսում,
— իրո՞ւնց ընդմախօսել նրան կինը: —
Իսկ դու տղայ ժամանակդ սուտ չ'ես խօ-
սել:

— Ո՛չ, 22 տարեկան հասակումս եր-
զուեցի կայսեր անունով եւ ո՛չ մի ժա-
մանակ սուտ չ'ասացի: Իսկ Լուարսարը
այդ հասակում այնպիսի սուտեր է խօ-
սում, որ մինչեւ անգամ ինքը չի էլ կար-
մում: Մի՞թէ դու մոռացել ես. « Մատիկ
հիւանդ եմ, փող ուղարկեցէ՛ք »: Իսկ երբ որ
տեղեկութիւն հաւաքեցինք, ախր քստմնելի
հեռագիրը թարգմանեցի իմ լեզուով եւ
դուրս եկաւ. « Թղթախաղի մէջ կրուել եմ,

փրկեցէք»։ Եւ նրան ոչինչ չեմ ուղարկիր։ Ուղարկիր զո՞ւ քո օթիտից, — խայթեց նա իր տիկնոջը։

«Օթիտը»։ Ո՛հ, դա մի մեծ վիրաւոր տեղն էր իշխանուհու։ 30 տարի առաջ, երբ նա պատրաստվում էր ամուսնանալու, նշանակեցին իբր օթիտ վճարել հինգ հազար բուրլի և տուին պարտամուրհակ այդ գումարի, իսկապէս աները ունէր ընդամենը 50 դեսեատին գետին, պարտք ու մանկահասակ զաւակներ։ Դէս ու զէն ընկաւ երիտասարդ զինուորական աստիճանաւորը (օֆիցէր), և չը սպասելով խոտացած գումարին՝ սուս ու փուս պսակուեց և կնոջը տարաւ փողերիկ քաղաքը, ուր նրա գունդն էր։ Այն օրուանից իշխան վախտանգը շատ սակաւ էր պատահում իր աներով խղճով կալուածքում, պարտամուրհակը վաղուց է պատուել զէն զցել և ամէն անգամ կնոջ սիրտը խայթում էր յիշեցնելով «օթիտը»։

Ինչ-որ մէկը լուսամուտը ծնեց։ Վախտանգը բացեց վարագոյրը. ապակիի ետեւը նկատեց իր եղբորորդու ժպտաղէտ դէմքը։

— Շնորհաւորում եմ։ Ես... մեծ... տուրքեր...

— Ի՞նչ է, — չը լսեց վախտանգը և լուսամուտը բացեց։

— Բարեւ ձեզ, հօրեղբայր։ Տուրքերը վճարում են մեզ, — ուրախ-ուրախ կրկնեց մոխրագոյն գլխարկով երիտասարդը։

— Անկարելի է։

— Ինչպէս չէ։ Այս բոլորիս մօտից եմ գալիս։ Խնդրեց՝ ցուցակները տալ իրեն։ Գիւղացիք ասեցին նրան. «Հեռացրէք կօշակներին, իսկ մենք ինչպէս վճարելենք մինչև ցայժմ մեր տէրերին, այնպէս էլ կը շարունակենք վճարել այսուհետև ևս։

— Ընդ։ Վերջացաւ ուրեմն երթումս։

— Այո՛, այո՛։ Ես գնում եմ, իսկ զուգահեռ հօրեղբայր եկէ՛ք պրիստաւի մօտ, ուրիշ կալուածատէրեր էլ են գալու։

Եւ այս խօսքերից յետոյ հեռացաւ լուսամուտից։

— Երեւում է կօշակներից վախեցան, անիծեալներ, — ցածր ձայնով արտասանեց իշխանուհին։

— Ինձանից վախեցան, ինչ է, — վրայ բերեց իշխանը. շտապով հագնուելով բուխարու մօտ։ — Նրանք երեւակայում էին, թէ կալուածատէր դարձան։ Ո՛հ մի տեսակ տուրք չէին կամենում վճարել, այնպէս անտաններին տէր դառան, որ նոյն իսկ մի գերան անգամ այնտեղից կարելի չէր դուրս բերել, ինձ իմ սեպհական զիւղից դուրս քշեցին, բերին զցեցին այս հաւարունը։ Ախր ինչո՞ւ համար այսքան տանջանքը։ Ոչինչ։ Այդ անիրաւներից բոլորը կ'առնեն, նոյն իսկ երկու տարուանը միասին, անպայման բոլորը։ Թող նրանք փորձեն հապա տուրքերը չը հատուցանել։

— Ասում են՝ հիմա հացահատիկը լաւ գին է գնում, — ասաց իշխանուհին ու նայեց այն նամակին, որ դրուած էր սեղանի ծայրին։

— Ես գիտեմ, կը տեսնեմ պրիստաւին, իսկ յետոյ՝ կը գնամ կապալառուի մօտ։

Նա արդէն իր չուխայի կոճակները զրցել և ծածկել էր իր զինուորական հնամաշ զլխարկը, իշխանուհին ետեից վազելով աղաչանօր ասաց.

— Ի սէր Աստուծոյ, հագիր գնում ես, մտիւր խանութ։ Գուցէ՛ կարապետը կը տայ ապառիկ։ Ուղարկիր՝ 1/2 ֆունտ թէյ և 1/2 ֆունտ էլ շաքար։

*
* *

Հետեւեալ օրը արեգակը արծաթափայլ փայլփլում էր երկնակամարի վրայ հէնց որ պահակներն ու կօշակները իրենց քրտնած, սապնոտած ձիաների վրայ կանգ առան ամուր կողպած խիզանի՝ ցածրիկ

1. «Երթօր» (վրացերէն) նշանակում է միութիւն, համաձայնութիւն, ընկերութիւն։

2. Խիզան (վրացերէն) անհող գիւղացիք կա-

պալառուի իրաւունքներով, որոնք մշակում են կալուածատէրերի հողերը։

խրճթի առջև, Շաւրխային էլ հէնց կանչում էին:

— Էյ, դու՛, Շաւրխա՛ն, Դուրս ե՛կ մեզ մօտ: Դուրս ե՛կ, շո՛ւտ: Մինչև ե՛րբ սպառնե՛ք քեզ այստեղ, — բարկանում էր Զահէլ խախօլը:

Ո՛չ մի մարդկային ձայն չէր դուրս ելնում մութ խրճիթից, և նա համր էր ինչպէս մեռեալ:

Բայց և այնպէս ներսը, քնակարանի խորքում տեղի ունէր ինչ որ շշուկ:

— Դու՛րս արի մեզ մօտ, հայրիկ: Դրանք կարող են ներս խուժել: Վատ կը լինի: Դուրս ե՛կ, — համոզում էին ծակերի արանքից Շաւրխին, որը տնտղում էր ներսից անկողն հիւրերին:

— Վճարէ՛ր իր ժամանակին գիսալան: Գիտես որ չեն ների: Ինչպիսի՛ դժբաղդու թիւն է:

— Իսկ ինձ թողնո՞ւմ էին վճարել: Դուք մոռացել էք, թէ ինչպէս ներս խուժեցին կարմրահարիւրեակները և սպառնում էին մահով, եթէ ես կը վճարէի գիսալան: Ես գուշակում էի այս օրը, սակայն ինչ անէի:

— Դուրս արի՛, թէ չէ՛ քար ու քանդ կ'անենք խրճիթդ, — կոչեցին մի անգամ էլ: Շաւրխան ծանր ախ քաշեց ու դուրս եկաւ խրճիթից սրտի արագ բարախում զգալով, նայեց ձիաւորների խմբին, լայն բացած աչքերը դարձրեց Արսէն Չիլիկիչ-վիլիի վրայ և պաղաւ ինչպէս մեխուած: — Հիմա էլ դո՛ւ սրանց հետ ես, — արտասանեց, վերջապէս, նա:

— Հապա դու ի՞նչու չէիր դուրս գալիս, երբ կանչում էինք, — յարձակուեց նրա վրայ Արսէնը՝ չը պատասխանելով իրեն ուղղուած հարցին: — Դու կարծում ես՝ եկել ենք կատակ անելու: Ի՞նչու չէիր գիտալ վճարում վախտանգ Դազլիչվիլիին: Ի՞նչպէս համարձակուեցիր: Հը՛:

Շաւրխան մօտեցաւ նրան շատ—մօտ, հանդիպեց ծանօթ դէմքին և՛ զարհուրած՝ բացականչեց.

— Կամ ես եմ խելագարուել, կամ

դու! Ես քեզ երեք ամիս է ինչ չեմ տեսնում: Աստուած իմ:

Եւ ջերմեռանդութեամբ խաչ հանեց երեսին Շաւրխան:

— Դո՛ւ Արսէն Չիլիկիչվիլի, կանգնած էիր ահա՛ այստեղ և առաջարկում էիր հրացան, որպէսզի գնանք սպաննեք Վախտանգին: Դու այն ժամանակ կարմրահարիւրակային խմբին էիր պատկանում:

— Իսկ այժմ ես պահականորդների (ստրամբիկներ) խմբին եմ պատկանում! Խօսքդ ինչ, — զրգուեց Արսէնը՝ ատելութեամբ նայելով նրա վրայ:

— Ձը գիտե՛մ՝ ո՛րտեղ եմ ես, — յուզուեց, զարմացաւ, սաստիկ ձեռքերի շարժում արեց խեղճ Շաւրխան:

— Այդ ի՞նչ է դուրս գալիս, — հետաքրքրուեց կօզակը:

— Պէտք է հիւրասիրել, ահա՛ թէ ի՞նչ. Թագաւորի ստուերին վատ—վատ բաներ է խօսում, — պաղարինութեամբ պատասխանեց նրան Արսէնը:

— Նա առաջնակարգ աւագակ է:

— Թագաւորի ընդդէմ?! — յուզուեցին կօզակները:

Եւ Շաւրխի գլխին տեղացին մորակի հարուածները:

.

*
*

Երկու սայլ լեփ—լեցուն ջուլաները ցորենով, զարիով ու սմինդրով կանգնած էր իշխան Վախտանգ Դազլիչվիլիի ժամանակաւոր կացարանի առջև: Շաւրխան պատառոտուն հանդերձով ու տրեխեւրով անհամբեր սպասում էր պարոնի ելքելուն ու ինքն իրեն մտածում էր.

— « Կուուեցէ՛ք, — ասում էին մեզ, — Ե յաղթութիւնը կը լինի մերը »: Ինչ առած: Կոուեցինք, ամեն բան արինք. եւ բոյկօտ յայտարարեցինք, եւ սպանեցինք ու կողոպտեցինք, եւ հրդեհեցինք նրանց կալուածքները, գոյքը, իսկ գործը դարձաւ այնպէս որ՝ ահա՛ ես ինքս իմ ձեռքով բերի կալուածատիրոջ գիսալան »:

Եւ Շաւրիսի միտքը դառնում էր դէպի ստորմտնիկ Արաքսը, որը զարմացնում էր երեւան գալովը նոր դերի մէջ...

— «Ո՛չ, ո՛չ, կօզակները մեզ չունին» ներանք ոչ ոքի չեն խաբում, ինչ բանի պաշտպան էին, այն բանին էլ կանգնած են ներկայիս: Իսկ ահա Արաքսը, չէնք նրան պիտի սպանել: Անիծեալ խուրջին:

Ճոռաց հին, միջատների ծակոտած դուռը, և տախտակեայ սանդուխքի վրայ երեսաց իշխան վախտանգը, կանգ առաւ հպարտ դիրք ընդունելով և խոցիչ կերպով պատասխանեց Շաւրիսայի լուռ բարկին.

— Ինչ է, Հաճել էք շնորհ բերել: Մտրակներն են յիշեցնել տուել պարտքդ: Ինչպէս է առողջութիւնդ, քէֆդ ու հալդ, Շաւրիսա:

— Ինչու էք կատակում մեզ հետ, — իշխան, — երկշտութեամբ պաշտպանվում էր գիւղացին՝ պտտացնելով ձեռքում իր թաղեայ զլխարկը: — Մենք միշտ ձեր ճորտն ենք եղած և ենք: Ե՛, ինչու էք մեր վրայ բարկանում: Միթէ՞ մենք մի բան հրականում ենք այս աշխարհում: Ձե՛ տ' մեր անգորութիւնը տեսնում էք, — կամացուկ ու տրտմագին արտասանեց Շաւրիսան: — Որ քարը տանք մեր գլուխը, որ հէնց մերոնք են մեզ խաբողը: — Ու մի քիչ լուրթիւնից յետոյ ամօթխածովթեամբ խոնարհեց գլուխը դէպի իշխանը.

— Գիտաւն ես բերել եմ ձեզ համար: Չափել եմ եմ ձեր երեսուն ֆունտանոց չանախով, միայն ահա... — կմկմաց նա: — Մի՛ գայրաբեր: Իմ հօրեղբորորդին Դմիտրան հիւանդ պարկած է, չը կարողացաւ գալ անձամբ, ուղարկեց իմ ձեռքով մահա՛ տա՛ ընդամենը 17 բուրլի: Երկու տարուանը՝ քսան բուրլին արդէն ստացել էք: Երեք բուրլի միայն պակասում է, մնացածը մի շարաթուայ ընթացքում կ'ուղարկէ: Հա-

մեցէք: — Եւ գիւղացին սկսեց համբել կեղտոտուած թղթադրամը:

— 17 բուրլի՝ 20 բուրլու փոխարէն, — կրակ կտրեց իշխանը: — Մի կօպէկ պակաս անգամ չեմ վերցնի: Գիտաւ էլ չեմ ընդունի, մինչև որ չը յանձնես ինձ ուղիղ քսան բուրլի: Ինչ ճարպիկն էք եղել դուք: Ինձ իմ սեպհական տանից դուրս քշեցիք: Որ ես էլ զիջեմ ձեզ: Գնա՛, պարտք վերցրո՛ւ որ և է մէկին ու բեր իմ երեք բուրլին: Ձէ որ ներկայիս ձեր մէջ էր — թօբա է: Ո՛ր և է մէկը ձեզանից ձեռաց փող կը տայ քեզ:

— Լա՛ւ, աղա-ջան: Իմ գիւական ընդունեցէք, — խոնարհութեամբ ասաց Շաւրիսան: — Շնորհ արէք ստացագիր տալ:

— Գնա՛, կորի՛ր, — պոռաց վրան իշխանը: — Մինչև որ լիովին փողս չը վճարես՝ ո՛չ գիտաւ կ'ընդունեմ, ո՛չ էլ ընկալագիր կը տամ:

— Աղա-ջան, — աղաչեց Շաւրիսան, — զթացէք իմ վրայ: Ճանապարհս շատ հեռու է, ժամանակն է երկկուպիտ, դուք ինքներդ գիտեք, շտապում եմ: Պէտք է ցերեկով ընկնել տուն, որ ուշանամ՝ կորած եմ: Գրչեբը կը խլեն, կը տանեն իմ միակ յոյս-ապաւէն եզները: Արձակիր ինձ: Ընդունեցէք գիտաւն, դարդկել տուէք սայլերը, տուէք ընկալագիր, որ պէտք է տանեմ տամ պրիստովին: Ապա թէ ոչ՝ կօզակները էլի՛ կը թափուին մեր վրայ...

— Մինչև որ չը-բե-ր-ե-ս ինձ երեք բուրլին ես, ոչ գիտաւ կ'ընդունեմ, ո՛չ ընկալագիր կուտամ: Լսեցի՛ր, Դէ՛հ, յետ կորի՛ր, — կոպտութեամբ հրամայեց վախտանգը ու անյայտացաւ: Մի քանի վայրեկան Շաւրիսան կանգնած էր լուռ ու մունջ և ասեղութեամբ նայում էր դրան, որը ամուր կողպուեց իր առջև, յետոյ՝ զարկեց իր կրծքին բռունցքով ու չարութեամբ շշնջեց.

— Համբուրեմ այն դաշոյնը, որը կը խառնէ քո աղիքները:

1. Մախտա (վրացերէն է) սարերի լանջերին գտնուած կալուածքից ստացուող տուրք: